ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2019 թվականի N 1077 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման 09 բաժնի 06 խմբի 01 դասի «1148 Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» ծրագրի «11005. Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում» միջոցառման մասով N 12 հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը սույն որոշման հավելվածում 55241300/11 (երեխաների համար նախատեսված հանգստի ճամբարների ծառայություններ) և 60171110/1 (ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալություն) ԳՄԱ կոդերով ծառայությունների գնման գործընթացն իրականացնել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա

հրատապ մեկ անձից գնման ձևով ծառայությունների ձեռքբերման ընթացակարգերի կազմակերպման եղանակով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության, 43-րդ, 44-րդ և 71-րդ կետերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ գնման պայմանագրերի հիման վրա 8,553.6 հազ. դրամը հատկացնել (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով) կազմակերպչական աշխատանքներ իրականացնելու, իսկ 3,446.4 հազ. դրամը (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով)՝ տրանսպորտային ծառայությունների մատուցման և էքսկուրսիաների կազմակերպման համար:

4. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ սույն որոշման 3-րդ կետում նշված գնման առարկաների ձեռքբերման համար կնքվելիք պայմանագրերում նախատեսել կետ՝ կողմերի միջև պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ ծառայությունները մատուցելու օրվանից փաստացի ծագած իրավահարաբերությունների վրա տարածելու վերաբերյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի օգոստոսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 28
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
օգոստոսի 22-ի N 1077 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ N 12 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գնման առարկայի						Ցուցանիշների փոփոխությունները (ծախսերի ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)
կոդը	անվանումը	գնման ձևը	չափի միավորը	միավորի գինը	քանակը	գումարը (հազ. դրամ)
ՀՀ կրթության և գիտության նախարարություն						0.00
Բաժին N 09	Խումբ N 06	Դաս N 01	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ			0.00
1148 11005 Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում						0.00
	ՄԱՍ I. ԱՊՐԱՆՔՆԵՐ					0.00
55241300/10	Երեխաների համար նախատեսված հանգստի ճամբարների ծառայություններ	ԳՀ	դրամ			(12000.0)
55241300/11	Երեխաների համար նախատեսված հանգստի ճամբարների ծառայություններ	ՀՄԱ	դրամ	8553600	1	8553.60
60171110/1	Ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալություն	ՀՄԱ	դրամ	3446400	1	3446.40

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

1077.voroshum[1]